

**Մ.Հ.Ս.Հ.Կ.**



**C.A.R.P.S.**

**ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՋՐՅԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՐՇԱԿ  
20-28 հուլիսի, 2013 թ.**

Սևանա լճի ստորջրյա ավազանի չորրորդ գիտահետազոտական արշավը կիրականանա 2013 թ. հուլիսի 20-ից 27-ը և ըստ էության շարունակությունն է 2010, 2011, 2012 թթ-ի աշխատանքների, որոնց արդյունքները բավականին հուսադրող էին հայ գիտնականների համար : Ֆրանս-հայկական այս առաքելությունն իրականացվում է ծրագրի երկու ղեկավարների՝ Կլոդ Թուլումջյանի (նախաձեռնող) և Ստեփան Կոջայանի կողմից՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային կից գիտահետազոտական ինստիտուտների և Երևանի Պետական Համալսարանի դասախոս-գիտաշխատողների, ինչպես նաև «Սևան Ազգային պարկի» և այլ պետական մարմինների սերտ համագործակցությամբ, որոնք աշխատում են Սևանա լճին առնչվող հարցերի շուրջ:

Այս գիտարշավներն անցյալ տարվանից իրականացվում են Ստորջրյա հետազոտությունների և սուզումների հայկական կենտրոնի (ՍՀՍՀԿ - հայկական ընկերակցություն, որը հիմնադրվել է 2011 թ. վերջին) պատասխանատվության ներքո՝ նախագահ Կլոդ Թուլումջյանի և փոխնախագահ Արա Ավագյանի գլխավորությամբ: (ՍՀՍՀԿ նպատակները ներկայացվում են առանձին) :

Ստորջրյա այս ուսումնասիրությունների նպատակն է՝ ամրապնդել անցյալ տարիներին ձեռք բերված նախնական արդյունքները, ինչպես նաև շարունակել գիտնականների համար նմուշների (ջուր, գազ, նստվածքներ, տիղմ), տեսաֆիլմերի և լուսանկարների ձեռքբերման աշխատանքները, ֆաունայի հաշվառումները (ծկներ, խեցգետիններ) և ֆլորայի նկարագրությունը: Հետազոտությունների նպատակն է՝ վերհանել այլ տեղագրական տվյալներ, որոնք կարող են ծառայել ստորջրյա հնագիտական պեղումներին կամ երկրաբանական ուսումնասիրություններին, իրականացնել հոսանքների չափումներ և բացահայտել ստորջրյա աղբյուրներ...

Առնչվող բնագավառներն են՝ հիդրոերկրաբանություն, ձկնաբուծություն, երկրաբանական գիտություններ, բնապահպանություն, հնագիտություն և ազգագրություն, քարանձավագիտություն և պատմություն:

Ձեռքբերված բոլոր տարրերը կտրամադրվեն հայ գիտնականներին՝ հետագա հետազոտությունների նպատակով, որոնց արդյունքներն անմիջականորեն կապված են քաղցրահամ ջրի այս ջրամբարի էկոլոգիական հավասարակշռության հետ, որն ունի ազգային ռազմավարական մեծ նշանակություն և հատկապես տարածաշրջանային կարևորություն:

**Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՍՀԿ)**  
Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոնի (ՄՀՍՀԿ)

Մ.Հ.Ս.Հ.Կ.



C.A.R.P.S.

Մյուս կողմից, տարված աշխատանքներից հետո տեղի ազգաբնակչությունն ավելի տեղեկացված կլինի Սևանա լճի մասին, ինչպես նաև նյութեր կտրամադրվեն թանգարաններին, մասնավորապես՝ Սևան Ազգային Պարկի թանգարանին, որն աջակցում է մեր գիտարշավների իրականացմանը :

Նախնական արդյունքները կամփոփվեն մամլո ասուլիսի ժամանակ, որը տեղի կունենա արշավախմբի ավարտին:

**Տեղեկությունների համար դիմել՝**

- |                  |  |
|------------------|--|
| Էլլինա Հովսեփյան | (+374) 098.80.60.14 – <a href="mailto:ellina_99@yahoo.fr">ellina_99@yahoo.fr</a>                   |
| Արա Նավոյան      | (+374) 093.13.19.80 – <a href="mailto:avagn@yahoo.fr">avagn@yahoo.fr</a>                           |
| Ստեփան Կոչայան   | (+374) 098.42.39.59 – <a href="mailto:stephane.kojayan@hotmail.fr">stephane.kojayan@hotmail.fr</a> |
| Կլոդ Թուլումջյան | (+374) 077.105.109 – <a href="mailto:touloumdjian.cl@wanadoo.fr">touloumdjian.cl@wanadoo.fr</a>    |

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՍՀԿ)  
Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոնի (ՄՀՍՀԿ)

Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)  
ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742